ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԾՐԱԳԻՐ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1938

05 FEB 2018

ՀԱՅԿ. ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԾՐԱԳԻՐ

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1938

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ
11-28793գր

Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան
Գլավլիտի լիազոր Կ.6680, պատվեր № 581, տիրաժ 1000

Պետհամալսարանի հրատարակչության տպարան Յերևան

*Հաստատված է ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Բարձրագույն Դպրոցի Գործերի Համամիութենական Կոմիտեյի նախագահի կողմից 1938 թ. փետրվարի 16-ին։*

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

### *ԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ*

| *Ռազմական դիսցիպլինների անունները* | *Անց է կացվում 2-րդ կուրսում (ժամեր)* |
|---|---|
| *ԲԳԿԲ պատմությունը և շինարարությունը* . . . | 24 |
| *Շարային պատրաստություն* . . . . . . . . . | 12 |
| *Հրաձգային պատրաստություն* . . . . . . . | 34 |
| *Տակտիկական պատրաստություն* . . . . . . | 36 |
| *Հ Ո Ք Պ* . . . . . . . . . . . . . . . | 18 |
| *Տեղագրություն* . . . . . . . . . . . . | 16 |
| *Ընդամենը՝* | 140 |

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԳԿԲ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ (24 ԺԱՄ)

### ԹԵՄԱ 1-ին *(4 ժամ)*

### *ՀԱՄԿ(բ)Կ—ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆ Է*

*Կարմիր Բանակը—բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության բանակն է։*

Ընկեր Ստալինը Կարմիր Բանակի յերեք առանձնահատկությունների մասին։

Կարմիր Բանակի շինարարության հիմնական էտապները։

Համկ(բ)Կ—Կարմիր Բանակի կազմակերպիչն ու առաջնորդն է։

Լենինի և Ստալինի մեծագույն դերը Կարմիր Բանակի շինարարության և քաղաքացիական կռիվների ճակատներում հաղթանակների կազմակերպման գործում։

Համկ(բ)Կ Կենտկոմի և ընկեր Ստալինի անդուլ և ամենօրյա ղեկավարությունը Կարմիր Բանակի շինարարության և մարտական հզորության ամրացման գործին խաղաղ ժամանակաշրջանում։

Ընկ. Վորոշիլովի դերը քաղաքացիական պատերազմների ճակատներում հաղթանակների կազմակերպման և Կարմիր Բանակի շինարարության գործում։

ԹԵՄԱ 2-ՐԴ (4 ԺԱՄ)

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԸ

Համկ(բ)Կ ծրագիրը Կարմիր Բանակի ուսուցման և դաստիարակման մասին—«Կարմիր Բանակի ռազմական ուսուցման և դաստիարակման աշխատանքը կատարվում է դասակարգային միաձուլման և սոցիալիստական լուսավորության հիմունքներով» —(Համկ(բ)Կ ծրագրից)։

Բոլշևիզմի կազմակերպչական սկզբունքները—ԲԳԿԲ կուս. շինարարության անքակտելի հիմքն է։

ԲԳԿԲ կուսշինարարության առանձնահատկությունները։

Դեմոկրատական կենտրոնացման սկզբունքները բանակային կուսակցական կազմակերպություններում։

Ռազմական կոմիսարների և քաղաքական օրգանների նշանակովի և սկզբնական կուս. օրգանների, կուսկազմակերպիչների ու կուսհանձնաժողովների ընտրովի սիստեմը։

ԲԳԿԲ ռազմական կոմիսարների ինստիտուտը, քաղորգանները և կուսկազմակերպությունները քաղաքացիական կռիվների շրջանում։

Լենինը և Ստալինը ռազմական կոմիսարների, քաղօրգանների և կուսակցական կազմակերպությունների դերի և նշանակության մասին քաղաքացիական կռիվների շրջանում։



ԲԳԿԲ քաղապարատի կառուցվածքը ժամանակակից էտապում։

ԲԳԿԲ քաղաքական վարչությունը, վորն աշխատում է Համկ(բ)Կ Կենտկոմի ռազմական բաժնի իրավունքներով։ Ռազմական օկրուգների, նավատորմերի և բանակների քաղաքական վարչությունները։ Զորական միավորումների ռազմական կոմիսարները և քաղաքական օրգանները։ Գնդի կուսքաղապարատը։ Բաղդեկ։ Ռազմական կոմիսարները և քաղորգանները, վորպես քաղաքական վերահսկողության և կուսակցական ազդեցության հաղորդողները Կարմիր Բանակի կյանքի բոլոր կողմերի վրա։ Կանոնադրություն Ռազմական Խորհուրդների և Ռազմական կոմիսարների մասին։

Բոլշևիզմին տիրապետելը, մարտիկների և հրամանատարների բոլշևիկյան դաստիարակումը, նրանց համախմբումը Համկ(բ)Կ Կենտկոմի և ժողովրդների առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը, բոլշևիկյան կադրերի պատրաստումը, հեղափոխական աչալրջության բարձրացումը և բոլշևիկյան անհաշտությունը ֆաշիզմի տրոցկիստական-բուխարինական ագենտների ու սոցիալիզմի այլ թշնամիների հանդեպ ԲԳԿԲ քաղաքական ապարատի կենտրոնական խնդիրն է։

ԲԳԿԲ քաղապարատի աշխատանքը Կարմիր Բանակի մարտական պատրաստության վորակի բարձրացման, կարգապահության ամրացման և սոցիալիստական մրցակցության ծավալելու բնագավառում։

ԹԵՄԱ 3-ՐԴ (4 ԺԱՄ)

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԳԿԲ

ԲԳԿԲ կուսակցական կազմակերպության դերը և խնդիրները Կարմիր Բանակի մարտական հզորության ամրացման գործում։

Ներկուսակցական աշխատանքի վերակառուցման և ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման խնդիրներն ընկեր Ստալինի ցուցումների և Համկ(բ) Կ Կենտկոմի փետրվարյան մարտյան պլենումի վորոշումների հիման վրա։ Ինքնաքննադատության ծավալման անհրաժեշտությունը։ Կուսակցական կադրերի բոլշևիկյան դաստիարակությունը և աճեցումը։ Կոմունիստների կա-

պի ամրացումն անկուսակցական մասսաների հետ։

Հեղափոխական աչալրջության և բոլշևիկյան մարտնչողականության բարձրացումը։ Կուսկազմակերպության խնդիրը մարտական և քաղաքական պատրաստության բարձր ցուցանիշների և զորական յերկաթե կարգապահության ամրացման պայքարում։

ԲԳԿԲ կուսկազմակերպության կառուցվածքը։ Սկզբնական կուսկազմակերպությունը և նրա աշխատանքը։ Կուսբյուրո։ Պատքարտուղար։ Վաշտային (նրան հավասար) կուսկազմակերպությունը և նրա աշխատանքը։ Կուսկազմակերպիչ։ Խմբակի կազմակերպիչ։ Կուսակտիվ։

Յուրաքանչյուր կոմունիստի ուսումնասիրումը և նրա հետ անհատորեն տարվող աշխատանքը։ Բոլոր կոմունիստներին կուսակցական ակտիվ աշխատանքի ներգրավելը։ Կուսակցական առաջադրությունների կատարման բաշխումը։ Վերահսկողություն և ստուգում։ Կուսակցական ժողովը վորպես կոմունիստների դաստիարակման կարեվորագույն միջոց։

Կուսկազմակերպության աշխատանքն անկուսակցականների մեջ։ Բանակային կուսկազմակերպությունների կապը քաղաքացիական կուսկազմակերպությունների հետ։

Կոմյերիտմիությունը կուսակցության օգնականը և ռեզերվն է։ ԲԳԿԲ կոմյերիտական կազմակերպության կառուցվածքը։ Սկզբնական կոմյերիտական կազմակերպությունը և նրա աշխատանքը։ Պատքարտուղար։ Կոմյերիտական բյուրո։ Վաշտային (նրան հավասար) կոմյերիտական կազմակերպությունը և նրա աշխատանքը։ Վաշտային (նրան հավասար) կոմյերիտական կազմակերպության նախագահությունը։ Կոմյերիտական ակտիվ։

Կոմյերիտմիության անդամներին կոմյերիտականը ակտիվ աշխատանքի մեջ ներգրավելու ձևերը և մեթոդները։ Կոմյերիտական առաջադրությունները։ Կոմյերիտական ժողովներ։

Կոմյերիտմիության քաղաքական մասսայական աշխատանքը վոչ կոմյերիտական յերիտասարդների մեջ։

Կոմյերիտական կազմակերպությունների խնդիրը լավագույն կարմիր բանակայիններին ու հրամանատարներին համ ԼԿՅԵՄ շարքերը ներգրավելու գործում և արժանի կոմյերիտականներին պատրաստելու Համ Կ(բ)Կ շարքերը մտնելու համար։



Բանակային կոմյերիտական կազմակերպությունների կապը քաղաքացիական կոմյերիտական կազմակերպությունների հետ։

## ԹԵՄԱ 4-ՐԴ (8 ԺԱՄ)
## ԲԳԿԲ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԽՍՀՄ-ի զինված ուժերի կազմը՝ ցամաքային զորքեր ոդային ուժեր, ծովային ուժեր, ՆԳԺԿ սահմանապահ և ներքին, պահպանություն։

Զորքերի տեսակը և նախանշանակումը։

Հետևակ։ Հետևակը զորքերի հիմնական տեսակն է, մարտի բախտի վորոշողը։ Հետևակի մարտի հիմունքները, գործողությունների արագությունը, հարված կենդանի ուժով և կրակային միջոցների հզորությամբ։

Հետևակի դերը և նշանակումը մարտում։ Մարտում հետևակի համագործակցությունը զորքերի մնացած տեսակների հետ։ Հրաձգային գումարտակի կառուցվածքը։

Հրետանի։ Հրետանու դերը և խնդիրները մարտում։

Հրանոթների տիպերը և տրամաչափը՝ թնդանոթներ, հոբիցներ, հրասանդներ և նրանց խնդիրները մարտում։

Արկեր՝ կարտեչային գործողության, հարվածային գործողության, ֆուգասային գործողության, քիմիական գործողության և ոժանդակներ։

Գնդային և գումարտակային հրետանու մարտական հատկությունները և նրանց խնդիրները մարտում։

Ավտոզրահատանկային մասեր։ Մեքենացված և մոտո-մեքենացված զորքերի խնդիրները մարտում։

Ժամանակակից տանկերի և զրահապատ մեքենաների մարտական և տակտիկական հատկությունները։

Տանկերի և զրահապատ մեքենաների դեմ պայքարելու միջոցները։

Ավիացիա։ Ավիացիայի տեսակները։ Ժամանակակից սավառնակների տիպերի բնութագրումը և նրանց մարտական աշխատանքը (հետախույզներ, կործանիչներ, ռմբակոծողներ և գրոհողներ)։

Ավիոռումբեր՝ ֆուգասային, բեկորային զրահահարներ, քիմիական, հրդեհող և նրանց գործադրությունը։

Հակառակորդի ավիացիայից պաշտպանվելու միջոցները և յեղանակները։

Հ ե ծ ե լ ա զ ո ր։ Զորական հեծելազորի դերը և նշանակումը ժամանակակից մարտում։

Հեծելազորի մարտական գործողությունների բնույթը։

Համագործակցությունը մոտո-մեքենայացված մասերի և ավիացիայի հետ։

## ԹԵՄԱ 5-ՐԴ (1 ԺԱՄ)

## ՆԵՐՔԻՆ ԿԵՆՑԱՂԸ ՅԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

*(Մ ի ջ ն ա կ ա ր գ դ պ ր ո ց ու մ ս տ ա ց ա ծ գ ի տ ե լ ի ք ն ե ր ի ս տ ո ւ գ ո ւ մ)*

Զինվորական ծառայողների իրավունքները և պարտականությունները։ Պետերի փոխհարաբերությունները շարքում և շարքից դուրս։ Բոլոր հրամանների և կարգադրությունների գիտակից և բարեխիղճ կատարումը։ Խրախուսանքի միջոցները բարեխիղճ և օրինակելի ծառայության համար։ Ներգործության միջոցները զորական զանցանքների համար։ Օրական վերակարգի (վաշտի հերթապահի և օրապահի) պարտականությունները։

## ԹԵՄԱ 6-ՐԴ (3 ԺԱՄ)

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻՑ

Պահակային ծառայության նշանակումը, պահակների կազմակերպումը և սպառազինումը։

Նշանաբան։

Ժամապահների ընդհանուր և հատուկ պարտականությունները։

Պահակակետ և ժամապահների փոխումը։

Կարգը պահակատնում

# ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (12 ԺԱՄ)

Ն պ ա տ ա կ ը։ Ուսանողների մեջ մշակել շարային արդվածք (վիպրավկա) և հաստատուն ունակությունները զենքով և առանց զենքի կանոնավոր կեցվածքի համար և ծանոթացնել շարքում ջոկի կազմի մեջ մարտիկի միատեղ գործողությունների ձևերի հետ։



## ԽՆԴԻՐ 1-ԻՆ (3 ԺԱՄ)

## ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՌԱՆՑ ԶԵՆՔԻ

Մարտիկի պարտականությունները մինչև շարք մտնելը և շարքում։

մարտիկի հիմնական կեցվածքն առանց զենքի։ «Շարվիր»։ «Հ ա վ ա ս ա ր», «Զ գ ա ս տ», «Ա զ ա տ», «Շ տ կ վ ե լ» և «Թ ո ղ ն ե լ» հրամանների կատարումը։

Դարձումներ տեղում և շարժման ժամանակ։

Շարժում շարային և յերթային քայլով։

Վողջունում տեղում և շարժման ժամանակ։

## ԽՆԴԻՐ 2-ՐԴ (3 ԺԱՄ)

## ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԶԵՆՔՈՎ

Կեցվածքը զենքով։

Դարձումներ տեղում և շարժման ժամանակ։ Հրացանային վարժություններ՝ «փ ո կ ի ա ռ», «վ ո տ ք ի», «ո ւ ս ի ա ռ», «վ ո տ ք ի», «մ ե ջ ք ի ա ռ», «վոտքի», «ձ ե ռ ք ի ա ռ», «ո ւ ս ի ա ռ»։

Շարժումը շարային և յերթային քայլով։ Դարձումներ շարժման ժամանակ։ Շարժման արագության փոփոխումը, քայլից վազքի անցնելը և ընդհակառակը։

Պետերի հանդիպումը և վողջունումը տեղում և շարժման ժամանակ։

## ԽՆԴԻՐ 3-ՐԴ (6 ԺԱՄ)

## ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԻ ԿԱԶՄՈՒՄ

Հրաձգային ջոկի շարքերը՝ բացադատված (միատողան և յերկտողան), յերթային (միասյուն, զուգասյուն) և մասնատված (շղթայով, ոձաշար)։

Մեկ շարքից մյուսին անցնելը։

Շարքից դուրս գալը և վերադառնալը։

Ջոկի շարժումը՝ քայլով, վազքով, շարժման ուղղության փոփոխումով։

Ջոկի առաջխաղացումը վազե-վազքով։

Ջոկի պատրաստվելն արագությամբ հետ մղելու հակառակորդի անակնկալ հարձակումը։

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— 1. Շարային պատրաստությունը պետք և սերտորեն շաղկապված լինի ուսումնական հաստատության պլանով (անցկացվող) ֆիզկուլտուրայի հետ։*

*2. Կանոնավոր կեցվածքը, արդվածքը, կարգապահությունը, ճկունությունը մշակել ոչ միայն շարային պարապմունքներում, այլ և դաշտային պարապմունքներին, հրաձգության գնալիս և վերադառնալիս։*

*3. Շարային պարապմունքներին, վորպես հիմնական պահանջ հանդիսանում են շարքի կարգապահությունը և հրամանների հստակ կատարումը։*

## (ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (36 ԺԱՄ)

*Ն պ ա տ ա կ ը։ 1. Հասկանալ հրաձգային ջոկի գործողությունը գլխային (կողքային) դետքում, հետախուզությունում, պաշտպանությունում, հարձակման ժամանակ և դաշտային պահակում։*

*2. Իմանալ և կարողանալ ջոկի կազմում կատարել մարտիկի պարտականությունները յերթում, հետախուզությունում, պաշտպանությունում և հարձակման ժամանակ։*

*3. Իմանալ դաշտային պահակում ժամապահի և ժամապահի ոգնականի պարտականությունները։*

Խ Ն Դ Ի Ր 1-ԻՆ (2 ԺԱՄ)

### ՄԱՐՏԻԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԹՈՒՄ

*Յերթի պատրաստվելը, հագուստի և գլխասարքի հարմարեցնելը։ Կարգը յերթում՝ կարգապահությունը յերթում, մեծ և փոքր դադարները։*

*Դիտողության ծառայության կազմակերպումը յերթում՝ դիտողության ձևերը և կանոնները տեղում և շարժման ժամանակ։*

*Ոդային և հակատանկային դիտողների պարտականությունները, դիտողության համար տեղի ընտրությունը, ճանաչողական նշաններից ոգտվելը, իմանալ և կարողանալ նրանց փոխանցել։*

Խ Ն Դ Ի Ր 2-ՐԴ (2 ԺԱՄ)

### ԳԼԽԱՅԻՆ (ԿՈՂՔԱՅԻՆ) ԴԵՏՔԻ ՀԱՆՎԱԾ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Գլխային (կողքային) դետք նշանակված հրաձգային ջոկի խնդիրը։ Մարտիկի և ջոկի պատրաստումը դուրս գալու գլխա-*



*յին (կողքային) դետքի ծառայություն կատարելու համար։ Դետք նշանակված մարտիկներին խնդիրներ տալը։*

Խ Ն Դ Ի Ր 3-ՐԴ (2 ԺԱՄ)

### ԳԼԽԱՅԻՆ ԴԵՏՔԻ ՇԱՐԺՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՅԵՐԵԿԸ

*Դետք նշանակված մարտիկի պարտականությունները։*

*Դետքի թագնված շարժման ձևերը և տեխնիկան ցերեկը։*

*Շարժման ճանապարհին հանդիպող տեղական առարկաները զննելու տեխնիկան։*

Խ Ն Դ Ի Ր 4-ՐԴ (2 ԺԱՄ)

### ԳԼԽԱՅԻՆ ԴԵՏՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԵԼԻՍ

*Գլխային դետքի և դետքերի գործողությունը՝ ա) հակառակորդի հետիոտ թույլ դետերի, բ) հակառակորդի փոքր խմբերի, գ) հակառակորդի մեծ ուժերի, դ) տանկերի (զրահամեքենաների) հետ հանդիպելիս։*

*Տեղեկագրեր կազմելու և տեղ հասցնելու յեղանակները։*

Խ Ն Դ Ի Ր 5-ՐԴ (4 ԺԱՄ)

### ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿՈՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ ՅԵՎ ՏԱՆԵԼԸ

*Հետախուզության հանված հրձագային ջոկի նշանակումն ու խնդիրները։*

*Հետախուզության կազմակերպելը հրաձգային ջոկով։*

*Հետախուզային ջոկի թագնված շարժման ձևերը և տեխնիկան։*

*Հետախուզության ճանապարհին հանդիպող տեղական առարկաների և բնակավայրի զննումը։*

Խ Ն Դ Ի Ր 6-ՐԴ (2 ԺԱՄ)

### ՀԵՏԱԽՈՒԶԱՅԻՆ ՋՈԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԵԼԻՍ

*Հետախուզային ջոկի և մարտիկների գործողությունները հակառակորդին անսպասելի հանդիպելիս։*

Հետախուզական ջոկի և մարտիկների գործողությունները՝ ա) հակառակորդի հետիոտն զորքերի, բ) հակառակորդի մեծ ուժերի, գ) տանկերի (զրահամեքենաների) հետ հանդիպելիս:

Հետախուզություն կատարելիս ջոկի հրամանատարի կողմից նկատածի մասին տեղեկությունները փոխանցելու և տեղեկագիր կազմելու յեղանակները:

ԽՆԴԻՐ 7-ՐԴ (2 ԺԱՄ)

## ՀԵՏԱԽՈՒԶԱՅԻՆ ՋՈԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԱՆԻՑ

Դարանի կազմակերպումը հրաձգային ջոկով:

Հրաձգային ջոկի գործողությունը դարանից:

ԽՆԴԻՐ 8-ՐԴ (2 ԺԱՄ)

## ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պաշտպանողական մարտի հիմունքները և խնդիրները:

Պարագայի գնահատումը ջոկի հրամանատարի կողմից:

Կրակային գծի ընտրումը բոլոր մասնագիտության մարտիկների համար:

Հրաձգային ջոկին խնդիր տալը:

Կրակային գծի գրավելը և կահավորելը:

ԽՆԴԻՐ 9-ՐԴ (3 ԺԱՄ)

## ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԱԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հրաձգային ջոկի կրակային սիստեմի կազմակերպումը պաշտպանության ժամանակ:

Հրաձգային քարտի կազմելը:

Մարտադաշտի դիտողության կազմակերպումը: Նշանների վորոնելը և ընտրելը, հեռավորության վորոշելը: Դիտողության արդյունքների մասին տեղեկությունների փոխանցումը:

ԽՆԴԻՐ 10-ՐԴ (3 ԺԱՄ)

## ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԻ ՅԵՎ ՄԱՐՏԻԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ—ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԳՐՈՀԸ ՀԵՏ ՄՂԵԼԻՍ

Ջոկի կրակային միջոցների և բոլոր մասնագիտության



մարտիկների գործողությունները հակառակորդի հարձակումը հետ մղելիս: Ջոկով հակառակորդի գրոհի հետ մղելը:

Ջոկի մարտիկների գործողությունը, յերբ հակառակորդը սեպվել է հարևանի պաշտպանության առջևի յեզրը:

ԽՆԴԻՐ 11-ՐԴ (4 ԺԱՄ)

## ՄԱՐՏԻԿԻ ՅԵՎ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հրաձգային ջոկի խնդիրը հարձակման ժամանակ:

Ջոկի շարժման համար ծածկված մատույցների ընտրումը:

Ջոկի մարտական կարգերը հարձակման ժամանակ:

Հակառակորդի կողմից ուժեղ գնդակոծվող տեղերի հաղթահարելը և կորուստների նվազեցնելու միջոցները (վազք-վազքով և սողալով առաջանալը):

Բնագծից բնագիծ շարժվելու հաջորդականությունը, կանգառումները, կրակի և շարժման համակցությունը:

Մարտադաշտի դիտողությունը: Խոչընդոտային տեղամասերի հաղթահարումը:

ԽՆԴԻՐ 12-ՐԴ (4 ԺԱՄ)

## ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿՈՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՐԱԿԱՅԻՆ ԿԵՏԻՆ ԳՐՈՀՈՒՄԸ

Գրոհի յելման բնագծի տեղի ընտրությունը:

Գրոհի պատրաստումը կրակով:

Գրոհի նետվելու համար հարմար մոմենտի վորոշումը:

Հրաձգային ջոկի գրոհող խմբակի համագործակցելը ձեռքի գնդացրի և նռնականետի կրակի հետ:

Լարացանցի հաղթահարումը:

Հակառակորդի յետ քաշվելու մոմենտի և ուղղության վորոշումը:

Նահանջող հակառակորդին հետապնդելը թևից:

ԽՆԴԻՐ 13-ՐԴ (4 ԺԱՄ)

## ՀՐԱՁԳԱՅԻՆ ՋՈԿԸ ՅԵՎ ՄԱՐՏԻԿԸ ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿՈՒՄ

Դաշտային պահակի նշանակումը և խնդիրները:

Դաշտային պահակի ծառայության կազմակերպումը և խնդրի պարզաբանումը:

Դաշտային պահակի և պահակապետի դասավորման տեղի ընտրություն: Պահակապետի (ժամապահի և օգնականի) պարտականությունները դաշտային պահակում:

Դաշտային պահակի և պահակակետի գործողությունները տեղական բնակչին և անցորդն չիմացող իրենց հետախուզին բռնելու դեպքում, զանազան քանակությամբ հակառակորդի հարձակման դեպքում, փախստականների ընդունման դեպքում:

## ՀՐԱՁԳԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (34 ԺԱՄ)

*Նպատակ:* 1. Սովորողների մեջ ամրացնել և խորացնել անցած գիտելիքները փոքր տրամաչափի և 7,62 մմ հրացանների մասին (մասերի աշխատանքը հրաձգության ժամանակ, առաջացած խափանումների պատճառները, մաքրելու պահպանելու և խնամելու կանոնները և մարտական փամփուշտի կառուցվածքը):

2. Կարողանալ քանդել և հավաքել հրացանը, պահել այն մշտական մարտական պատրաստ վիճակում և վերացնել հրաձգության ժամանակ խափանումները:

3. Իմանալ հրաձգության դիպուկության վրա ազդող պատճառները՝ կախված հրաձգից, հրացանի վիճակից և մթնոլորտային պայմաններից:

4. Իմանալ ձեռքի գնդացրի, ձեռքի և հրացանային նռնակների կառուցվածքը:

5. Կարողանալ կատարել փոքր տրամաչափի հրացանով ծրագրով նախատեսված հրաձգությունները:

ԽՆԴԻՐ 1-ԻՆ (2 ԺԱՄ)

### ՓՈՔՐ ՏՐԱՄԱՉԱՓԻ ՀՐԱՑԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

(Ստուգել միջնակարգ դպրոցում ստացած գիտելիքները)

Տոզ-8 և Տոզ-9 փոքր տրամաչափի հրացանների կառուցվածքը՝ նրանց գլխավոր մասերը՝ ա) փողը փողատուփով և նշանոցային հարմարանքը, բ) վարիչքուլց մեխանիզմը, գ) փականը, դ) ագուստ:

Հրացանի մեխանիզմների աշխատանքը:

Քանդելը և հավաքելը:

Փոքր տրամաչափի փամփուշտի կառուցվածքը և գնդակի ծակունակություն: Հրաձգության դիպկությունը:



Հրացանի հետ վարվելու կանոնները և նրա խնամելը՝ մաքրումը, յուղումը և պահելը:

ԽՆԴԻՐ 2-ՐԴ (18 ԺԱՄ)

### 7,62 ՄՄ ՀՐԱՑԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՅԵՎ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈՔՐ ՏՐԱՄԱՉԱՓԻ ՓԱՄՓՈՒՇՏՈՎ

Հրացանի մարտական հատկությունները:

Հրացանի ընդհանուր կառուցվածքը:

Հրացանի մեխանիզմների և մասերի աշխատանքները՝ ա) մասերի դրությունը լցնելիս, բ) մասերի աշխատանքը լցնելիս, գ) մասերի աշխատանքը ձիգ կատարելիս, դ) մասերի աշխատանքը վերալցնելիս, յե) մասերի աշխատանքը հրահանը պահպանիչ վոտքի դնելիս:

Հրացանի անկանոն գործողության պատճառները, նրանց հայտնաբերումը և վերացնելը: Ամենաբնորոշ անսարքությունները, վորոնք խափանում են առաջ բերում հրաձգությունների ժամանակ, հրաձգության ժամանակ խափանումների վերացնելու և կանխելու միջոցները:

Հրացանի հետ վարվելը, նրա խնամելը և պահելը՝ ա) հրացանի քանդելու և հավաքելու կանոնները, բ) հրացանի մաքրելու, յուղելու և պահելու կանոնները:

Հրաձգություններ

*Վարժություն* № 4

Նշան—թիրախ № 7.

Հեռավորություն—50 մ.

Փամփուշտներ—3.

Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկի օգտագործումով:

Ժամանակը—անսահմանափակ.

Գնահատականը՝ գերազանց—24 աչկո, լավ—22 աչկո.

*Վարժություն* № 5.

Նշան թիրախ № 15 (կրծքաչափ), հինգ անգամ փոքրացրած և փակցված թղթի շերտի վրա թույլ գծերով գծված ուղղանկյունների ըստ բարձրությամբ 10 սմ. լայնությամբ 5-սմ:

Հեռավորություն—50 մ.

Փամփուշտներ—3.

Դրությունը հրաձգության համար—ծնկած փոկի ոգտագործումով, ժամանակը—անսահմանափակ. առաջադրությունը—յերկու գնդակ դիպցնել այն ուղղանկյուններին, վորոնք համապատասխանում են մեկ նշանակետի դուրս բերելուն հրահանգչի ցուցումով (որինակ—դուրս բերել կես կերպարան դեպի ձախ)։

Վարժություն № 6։ Նշան—թիրախ № 9ա, վեց անգամ փոքրացրած։

Հեռավորությունը—50 մ.

Փամփուշներ—3.

Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկի ոգտագործումով։

Ժամանակը՝ № 8 ՏՈՁ հրացանով—33 վայրկյան, № 9 ՏՈՁ հրացանով—27 վայրկյան։

Առաջադրություն—յերեք գնդակ դիպցնել № 7 շրջագծում։

Վարժություն № 7.

Նշան—թիրախ № 9ա, վեց անգամ փոքրացրած։

Հեռավորությունը 50 մ.

Փամփուշտներ—3 և 2 վարժական.

Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկի ոգտագործումով։

Ժամանակը՝ № 8 ՏՈՁ հրացանով—55 վայրկ., № 9 ՏՈՁ հրացանով—45. գնահատականը՝ գերազանց—բոլոր յերեք գնդակները դիպցնել թիրախին, լավ—դիպցնել թիրախին յերկու գնդակ, իսկ յերրորդ գնդակը դուրս չհանել № 7 շրջանագծից, հինգ ձիգ կատարելու պայմանով։

Բնական վարժություն.

Նշան—թիրախ № 7.

Հեռավորությունը—50 մ.

Փամփուշտներ—5.

Դրությունը հրաձգության համար—պառկած, փոկի ոգտագործումով։

Ժամանակը—անսահմանափակ.

Գնահատականը՝ գերազանց—40 աչկո, լավ—36 աչկո, միջակ—30 աչկո։

ԽՆԴԻՐ 3-ՐԴ (2 ԺԱՄ)

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ձիգի յերեվույթը։



Գնդակի շարժումը փողանցքի մեջ, ոգնում, սկզբնական արագություն, հետագիծ. ուղիղ ձիգ, գնդակի պտուտական շարժման և բնական շեղումի ազդեցությունը։ Հարվածելի և վոչ հարվածելի (մեռյալ) տարածությունները։

Գնդակների ցրման պատճառները՝ կախված՝ զենքից, փամփուշտներից և հրաձգից։ Քամու ազդեցությունը գնդակի թռիչքի վրա։ Հրացանի նշանոցի հատման մեջ ուղղում մտցնելու կանոնները և նշանակետի ընտրելը։

Հրաձգության դիպուկությունը։ Նշանառության ժամանակ կատարվող սխալները՝ կախված հրաձգից, զենքից և այլ պատճառներից և նրանց վերացնելը (սկզբնական հրաձգությունների որինակելի վարժություններ փոքր տրամաչափի փամփուշտներով)։

ԽՆԴԻՐ 4-ՐԴ (3 ԺԱՄ)

## ՁԵՌՔԻ ՆՌՆԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

Ձեռքի նռնակների մարտական նշանակումները և նրանց գործադրման յեղանակները հարձակողական և պաշտպանողական մարտում։

Գործողության (նետման և բեկորների տարաթռիչքի) հեռավորությունը։ Բեկորների մահացու ուժը։

1914—1930 թ. թ. սիստեմի նռնակի կառուցվածքը և նրանց նետման համար պատրաստելու ձևերը։

Նռնակի հետ վարվելը։

ԽՆԴԻՐ 5-ՐԴ (3 ԺԱՄ)

## ՀՐԱՑԱՆԱՅԻՆ ՆՌՆԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

Հրացանային նռնակների մարտական նշանակումները, գործողության հեռավորությունը, բեկորների ծակունակությունը և մահացու ուժը։

Հրացանային նռնակի կառուցվածքը և նետման համար պատրաստելու ձևերը։

Նռնանետի հրաձգության համար պատրաստելու ձևերը։

ԽՆԴԻՐ 6-ՐԴ (6 ԺԱՄ)

## ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

Ձեռքի գնդացրի [illegible] հատկությունները։

ՀԱ.ՄԱՐ

Ձեռքի գնդացրի կառուցվածքը և նրա գլխավոր մեխանիզմների աշխատանքը։

Ձեռքի գնդացրի հաստումը հրաձգության համար։

Հրաձգելու պատրաստվելը, գնդացրի ուղղումը և նշանառությունը և ձգանի իջեցնելը։

Մասերի աշխատանքը ձիգի ժամանակ։

Գնդացրի դատարկելը։

Գնդացրի հետ վարվելը և խնամելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—1. «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշանի նորմաների հանձնումը կատարել «Հրացանով հրաձգության ժամանակավոր նորմաների դասակարգման» համաձայն, միայն մասսայական աշխատանքներին հատկացված ժամերին։

2. Քննական վարժությունները կատարվում են վաղորոք խփումը ճշտված լավագույն փոքր տրամաչափի հրացաններով (սև խնձորի տակ նշանառության ժամանակ դիպման միջին կետը պետք է համընկնի թիրախի կենտրոնին։

3. Հրաձգությունների կուրսը փոքր տրամաչափի հրացաններով պետք է վերջանա ինչպես ուսումնական հաստատությունների ներսում, այնպես էլ նրանց միջև կազմակերպված հրաձգային մրցություններով պաշտպանական-մասսայական աշխատանքի ժամերին։

4. Այն ուսանողները, վորոնք միջին ողակում (միջնակարգ դպրոցում) չեն անցել գործնական հրաձգությունները, կազմում են առանձին խմբակ միջնակարգ դպրոցի ծրագրով ցույց տված № 1—2 վարժություններն անցնելու համար պաշտպանական-մասսայական աշխատանքների ժամերին։

5. Ուսումնական հաստատությունում 50 մետրի բացակայության դեպքում թույլատրվում է հրաձգությունն անցկացնել 25 մ. վրա փոքրացնելով թիրախը համապատասխան հեռավորության։

## ՀՈՔՊ (18 ԺԱՄ)

Նպատակը։ 1. Ստուգել և խորացնել միջնակարգ դպրոցում ստացած գիտելիքները. ա) մարտական քիմիական նյութերի մասին, բ) հակագազի և նրանից ոգտվել կարողանալու մասին։

2. Իմանալ դեգազացիայի միջոցները և կարողանալ նրանցից ոգտվել դեգազացման ժամանակ։

3. Կարողանալ գործնականորեն ինքնոգնություն և փոխադարձ ոգնություն ցույց տալ կայուն և անկայուն թունավորող նյութերով վնասվելու դեպքում։

4. Ունենալ հասկացողություն խմբական պաշտպանության մասին։



2. Իմանալ ՀՈՊ-ի ոբյեկտի կազմակերպումը։

### ԹԵՄԱ 1-ԻՆ (2 ԺԱՄ)

### ՔԻՄԻԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

(Միջնակարգ դպրոցում ստացած գիտելիքների ստուգում)

Քիմիական հարձակման համար քիմիական մարտական նյութերի գործադրման միջոցները և յեղանակները։ Թունավորող նյութերի բաժանումը ԿԹՆ և Անկ. ԹՆ։ Հիմնական թունավորող նյութերի համառոտ բնութագիրը և նրանց մարտական նշանակումը։

Ծխատու և հրդեհող նյութերի համառոտ բնութագիրը։

ԹՆ ներգործությունն որգանիզմի վրա. մաշկա-պալարային, գրգռիչ, արտասվաբեր, հեղձուցիչ և ընդհանուր թունավորող։

ԹՆ ներգործությունը սպառազինման առարկաների, հագուստի և սննդի վրա։

### ԹԵՄԱ 2-ՐԴ (2 ԺԱՄ)

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Միջնակարգ դպրոցում ստացած գիտելիքների ստուգում)

ԲՆ հակագազը, նրա կառուցվածքը, սարքին և անսարք հակագազերից ոգտվելու կանոնները։

Հակագազի անսարքությունները և նրանց վերացնելը։ Սարքինության ստուգումը, հակագազի խնամելը և պահելը։

Հակաքիմախական ծրար և նրանցից ոգտվելու կանոնները։ Պաշտպանական թիկնոցի, գուլպաների, կոմբինեզոնի, ռեզինե սապոգների և ձեռնոցների գործադրությունը։

### ԹԵՄԱ 3-ՐԴ (4 ԺԱՄ)

### ԳԱԶԱՀԱՆՈՒՄ

Հասկացողություն ԿԹՆ և Անկ. ԹՆ գազահանման մասին։ Գազահանող նյութեր։

Գազահանման նյութերի գործադրելու համար կրվող և տարվող գործիքներ՝ (ПД-1), գազահանող «Պիոներ» մաղ-պատ-

գարակ, գոքաթիակ, կրակով գազահանման գործիքներ և գազահանման այլ միջոցներ։

Վայրի, զենքերի, զինասարքի և հագուստի գազահանում։

ԿԹՆ վարակված վայրից դուրս գալը օգտվելով ձեռքի տակ յեղած միջոցներից։

Թունավոր նյութերից մթերքների և կերի նախապահպանման միջոցները։

ԹԵՄԱ 4-ՐԴ (4 ԺԱՄ)

## ԲԺՇԿԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մաշկա-պալարային, հեղձուցիչ և գրգռող ԹՆ վնասման ներգործության հատկանիշները։

ԹՆ և Անկ. ԹՆ-ից վնասվելու դեպքում ինքնօգնություն և փոխադարձ օգնություն ցույց տալը։

Օդային հարձակման ժամանակ վնասվածներին տեղափոխելը և արհեստական շնչառություն կատարելը։

Անհատական ծրարից օգտվելը։

ԹԵՄԱ 5-ՐԴ (2 ԺԱՄ)

## ԽՄԲԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ խմբական պաշտպանության մասին։

Ապաստարանների (սենյակների) հակաքիմիական կառուցվածքը և կահավորումն ու նրանցից օգտվելը։

ԹԵՄԱ 6-ՐԴ (4 ԺԱՄ)

## Հ Ո Պ-ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օբյեկտի, տան, ուսումնական հաստատության և այլն ՀՈՊ-ի կազմակերպումը և ՀՈՊ-ի պետի հիմնական պարտականությունները։

Ինքնապաշտպանության խմբակի և նրա կազմի մեջ մտնող օղակների դերն ու խնդիրները։

Օդային հարձակման դեպքում ՀՈՊ-ի միջոցառումները։

Օդային հարձակման ազդանշանները, քիմիական վտանգի և ավարտի ազդանշանները։

Սովորողների պարտականություններն օդային հարձակման դեպքում։



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—1. Սովորողների մեջ ՀՈՔՊ գիտելիքներն ամրացնելու, աշխատանքի գործնական փորձառություններ մշակելու նպատակով նույնպես և օդային քիմիական վտանգի դեպքում ուսումնական հաստատությունում կարգի կազմակերպելու և վարվելու կանոնների ամուր յուրացման համար—ԲՈՒՀ-երում ստեղծվում են ՀՈՔՊ-ի խմբակներ, կամ ջոկատներ և վորոնց հետ պարապմունքները տարվում են արտադպրոցական աշխատանքի կարգով։

2. Պարապմունքների ժամանակ ուսանողներին մարզել հակագազում մնալու մեջ։

3. ՀՈՔՊ-ի կրծքանշանի, կամ ՀՈՔՊ-ի հրահանգչի կոչման նորմաների հանձնումն անցկացվում է արտադպրոցական մասսայական աշխատանքների կարգով։

# ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ (16 ԺԱՄ)

Ն պ ա տ ա կ ը։ Սովորեցնել՝ ա) օգտվել թվական և գծային մասշտաբներով, բ) կարդալ քարտեզը և նրանով վայրում կողմնորոշվել։

ԹԵՄԱ 1-ԻՆ (2 ԺԱՄ)

## ՎԱՅՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

(Դաշտ դուրս գալը)

Վայրը և նրա ռազմական նշանակությունը։

Վայրի բազմատեսակությունը և նրանց տակտիկական հատկությունները։ Հասկացողություն ռելյեֆի մասին, ռելյեֆի տիպային ձևերը, ռելյեֆի բնորոշ կետերը և գծերը, ռելյեֆի լանջերը և նրանց ռազմական նշանակությունը։ Վայրի գծագրական նկարումը և նրա ուսումնասիրելու յեղանակները։

ԹԵՄԱ 2-ՐԴ (2 ԺԱՄ)

## ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԱՍՇՏԱԲՆԵՐԸ

Ընդհանուր հասկացողություն մասշտաբի մասին։ Մասշտաբների տեսակները՝ թվական և գծային, նրանց վորոշելը և նրանցից օգտվելու ձևերը։ Խոշոր և մանր մասշտաբներ։

Թվական մասշտաբից գծայինին անցնելը և ընդհակառակը։

Գծային մասշտաբի կառուցելը մետրական չափերով ռուսական հին չափերով քարտեզների համար։

### ԹԵՄԱ 3-ՐԴ (2 ԺԱՄ)

## ՏԵՂԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՎՐԱ

*Տեղական առարկաները և նրանց ռազմական նշանակությունը։ Տեղական առարկաների պայմանական նշանները՝ 1: 50,000, 1: 42,000, 1: 25,000 և 1: 10,000 մասշտաբներով։*

*Տեղական առարկաների, ճանապարհների, ճահիճների, անցարանների, գետերի, առուների և կամուրջների դասակարգումը։ Քարտեզների վրայի մակագրեր՝ թվանշաններ, համառոտ նշումներ և մակագրեր շրջանակից դուրս։ Տեղեկագրական պայմանական նշանների գծագրումը մատիտով։*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ուսանողները պայմանական նշանների արտագծումն իրենց տետրերի մեջ, դասատույի առաջադրությամբ, կատարում են տանը։*

### ԹԵՄԱ 4-ՐԴ (4 ԺԱՄ)

## ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՎՐԱ ՌԵԼՅԵՖԻ ՆԿԱՐՈՒՄԸ

*Ռելյեֆի տեսակները։*

*Ռելյեֆի և լանջերի նկարումը հորիզոնականներով։*

*Հորիզոնականների տեսակները՝ հիմնական, լրացուցիչ, օժանդակ և հաստացրած։*

### ԹԵՄԱ 5-ՐԴ (6 ԺԱՄ)

## ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՐԴԱԼԸ ՅԵՎ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

*(Դաշտ դուրս գալը)*

*Ռելյեֆի կարդալը քարտեզի վրա։*

*Լանջերի, իշխող կետերի և ուղղորդության վորոշելը։*

*Հասկացողություն կողմնորոշման մասին։*

*Կողմնացույց, նրա կառուցվածքը և ստուգումը, մագնիսական սլաքի խոտորումը և հորիզոնի կողմերի վորոշումը՝ արևի, բևեռային աստղի, ժամացույցի և տեղական առարկաների օգնությամբ։ Վայրում կողմնորոշվելը (շարժումից հետո) կողմնացույցով և տեղական առարկաներով, վորոնք ցույց են տված յեղել մինչև շարժվելը։*

*Քարտեզի կողմորոշումը տեղական առարկաներով և վայրում այն առարկաների գտնելը, վորոնց տեղը, կամ ուղղությունը ցույց է տրված քարտեզի վրա։*

*Ազիմուտ և նրա վորոշումը կողմնացույցի և տրանսպարտիրի օգնությամբ, ծածկված վայրում ազիմուտով շարժվելը։*

ՀՀ Ազգային գրադարան
NL0977706

574

11
28793

Սրբագրիչ՝ Մ. Հ ա խ ն ա զ ա ր յ ա ն
Գլավլիտի լիազոր Հ 6680, պատվեր № 581, տիրաժ 1000

Պետհամալսարանի հրատարակչության տպարան, Երևան—Տերյան № 72